

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵՆ ՀԱՅԵՐԸ ԹԻՒՐԳԻԱՅՈՒՄ

Հաղարաւոր տարիներ ապրում է հայը աշխարհի երեսին և միշտ դժբախտ: Հայ ազգի պատմութիւնը իսկապէս մի մարտիրոսութեան և յիմարութեան անվերջ փաստերի նկարագրութիւն է: Բոլոր դրացի ժողովուրդները հայերին չեն սիրել և չեն սիրում: Զուր չէ: Հայը իւր բարձր յատկութիւնների հետ միասին ունի և սոսկալի պակասութիւններ: Հայի համակրելի յատկութիւնները—նրա աշխատասիրութիւնն է, հայրենիքի սէրն է և երկրագործութեան և հողին կպած լինելը: Նրա սոսկալի պակասութիւնների գլխաւորը նրա անծայր անհատականութիւնն է կամ եսականութիւնը, նոյնպէս և քաղաքական խելքից դուրկ լինելը, ֆանտազիորութիւնը հասարակական գործերում և ահռելի ցուցամոլութիւնը: Այս յատկութիւններով հայը ապրել է մինչև այսօր միշտ հալածուած, միշտ յուսախաբ, միշտ նեղութեան մէջ, միշտ ծեծուած և կոտորուած: Պէտք է մի օր հայը ևս քննական աչքով նայի իւր անցեալին ու ներկային և ըստ այնմ տնօրինէ իւր ապագան թէ՛ իջ: Հայը իւր հասարակական գործերում ապրել է ինստինկտով, բնազդամբ, բայց ոչ գիտակցաբար, իսկ ամեն մի առանձին հայ միշտ տաան անգամ չափել է և յետոյ կտրել: Հայը իւր անհատական գործերում այլ եղանակով է գործել, իսկ հասարակական գործերում՝ այլ: Եւ այս շատ հասկանալի է:

Հայը վաղուց մտել է իբրև պետութիւն, իբրև հասարակական մարմին, իսկ իբրև անհատ ապրել: Հասարակական օրգանիզմ պահելու կարևոր յատկութիւններ զարգացնելու պայմաններ չեն եղել, իսկ անհատականապէս ապրելու կարևորութիւնը զարգացրել է հայի անհատական խելքը: Մինչև վերջին հայը չեն կարողացել կոտորելու արաբացի զօրավար Բուղաները, Թէյմուրլանդները, իշխան Գօլթիցիները, Շաքիր փաշաները և այլն: Բայց այս հաղարաւոր տարիների կոտորածներից, փորձերից և յուսախաբութիւններից յետոյ պէտք է ուշքի գար Իհարկէ պէտք է, եթէ ոչ խելքի կ'բերեն և աւելի սոսկալի ու աւելի խիստ կերպով, բան թէ եղել է մինչև այսօր: Ապացոյցը մեր աչքի առաջ է: Մինչև այսօր դեռ պարզուած չէ թէ արդեօք Ախմէդ Րիզայի կառավարութիւնը, որ կարողացաւ Մամէդ Ալի Շէֆկէթ փաշայ զօրապետի ուժով խորտակել Աբդուլ-Համիդին՝ նոյն եռանդոտ և անկեղծութեամբ կամեցաւ դադարեցնել Ադանայի կոտորածները իւր ժամանակին թէ ոչ: Բայց չէ որ երբէք Աբդուլ Համիդի ժամանակ զաւառներում այդպիսի սոսկալի կոտորած տեղի չէ ունե-

ցել: Ուրեմն: Ուրեմն պէտք է թուրք ժողովրդին, ուրեմն և թուրք կառավարութեանը համոզել, որ հայը երկրի բարօրութեան համար կարևոր տարր է և այլևս քաղաքական ինտրիգների գործիք չպիտի դառնայ և ոչ էլ ցնորքներով ապրելու ցանկութիւն ունի: Բաւական է: Եւ այժմ ըոպէն շատ յարմար է: Թուրքիայի դրութիւնը շատ ծանր է այժմ և շատ կարօտ երկրի ազգաբնակչութեան համակրութեան, Թուրքիայի վերածնութեան գործը հէնց այժմ էլ երկունքի մէջ է: Արդու-Համիդի անհեռատես և կործանիչ քաղաքականութեան և սխալների հետևանքները այժմ են արտայայտուում: Թուրք կառավարութիւնը շատ մեծ զգուշութեամբ և մեծ խելքով պիտի գործէ պետութիւնը վերջնական քայքայումից ազատելու համար: Այսպիսի ժամանակ հայերը կարող են միմիայն մի քաղաքականութիւն ունենալ, իրենց հայրենիքի բարօրութեան հարսզատ զաւակներ լինել և օգնել բարեմիտ կառավարութեանը ու ժողովրդին երկիրը կարգի բերելու:

«Baky» լրագրի թղթակից պ. Սալմանեան նկարագրում է հայոց ազգային ժողովի կողմից նախարարապետ Հակկի-Բէյին այցելող պատգամաւորութեան խօսակցութիւնը: Նախարարապետը շատ բարեմիտ էր դէպի պատգամաւորութեան արժարժած խնդիրները և ցանկանում է, որ ս. Պատրիարքը յետ դառնայ: Մի մոռացէք, թուրքահայ եղբայրներ, որ ոչ մի երկրում այսօր հայերը չեն կարող այն խնդիրների մասին խօսել կառավարութեան հետ, որպէս դուք և աշխատեցէք գնահատելի օսմանեան սահմանադրութեան շնորհիւ առաջացած կեանքի պայմանները և տնօրինելու ձեր ապագան կառավարութեան և դրացի ժողովրդի հետ փոխադարձ գիտակցութեամբ, որ դուք ընդ միշտ կապուած էք ձեր հայրենիքի հետ և ձեր աչքը մուրացկանի և դաւաճանի պէս դրսի յոյսերի վերայ չ'պիտի լինի:

Գ. ԵՆԳԻՐԱՆՅԱՆ